# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/176 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | Հուշամեդալը պետք է բաղկացած լինի կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Սկավառակի տրամագիծը պետք է լինի 35 մմ, պատրաստված 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրված միայն դրոշմման ճանապարհով: Հուշամեդալի նախապատրաստվածքի հաստությունը պետք է լինի 2,5մմ, կախիչի նախապատրաստվածքի հաստությունը՝ 2,0մմ: Հուշամեդալը պետք է անցնի հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվի բարձր հարգի ոսկով: Սկավառակի դիմերեսին պետք է պատկերված լինի սիրտը և սրտի աշխատանքը խորհրդանշող պատկերների ռելիեֆային համակցություն, որի կենտրոնում վեր է խոյանում Երևանի քաղաքապետարանի շենքի պատկերը: Հուշամեդալի արտաքին շրջագծի կորին զուգահեռ, ուռուցիկ մեծատառերով պետք է գրված լինի «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԺԻՇԿ» գրվածքը: Կախիչը պետք է պատրաստված լինի 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվի միայն դրոշմման ճանապարհով: Այն պետք է անցնի հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվի բարձր հարգի ոսկով: Կախիչի կենտրոնական մասում պետք է լինի Երևան քաղաքի ռելիեֆային զինանշանը, որի աջ և ձախ կողմերում դափնու տերևներ են: Յուրաքանչյուր հուշամեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի (կապույտ թավշյա |

| | | |
|---|---|---|
| | | կազմով) մեջ /100x70x30մմ/ և ունենա իսկության հավաստագիր: 2. Որակի և գունային երանգների վերաբերյալ պահանջներ. Հուշամեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի նմուշի արտաքին տեսքին, ունենա նույն ռելիեֆային պատկերներն ու գրվածքները: Չի թույլատրվում` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: - Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի տարբերությունը պետք է լինի ոչ ավել քան 0.1մմ: 3. Պատրաստման տեսակի վերաբերյալ պահանջներ. Հուշամեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունն ապահովելու համար դրանք պետք է պատրաստվեն միայն դրոշմման ճանապարհով և թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: 4. Անվանադրոշմում, հարգադրոշմում. Հուշամեդալի դարձերեսին դրոշմման եղանակով պետք է դաջվի արտադրողի ապրանքային նշանը և արծաթի համապատասխան հարգը: 5. Համաձայնեցման ենթակա փաստաթղթեր. Մատակարարի կողմից նմուշների 3Դ մոդելավորված Հուշամեդալների նկարները և հետո իրական նմուշները պետք է նախապես համաձայնեցվեն գնորդի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/176 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |